ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-20-8/6-1

ք. Երևան 07.05.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ի. Անդրեասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Ծառայության մատուցման արդյունքում ստացված ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ**, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ **222 540** ՀՀ դրամ.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ **229 500** ՀՀ դրամ.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ

գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՎՏ վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/2
աշխատակազմի գործառնական վարչություն	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2050022151631001
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02508699
ՀՀ պաշտպանության նախարարության	տնօրեն
ՆՏԼ գլխավոր վարչության պետ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ի. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-8/6-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	**Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ /Տպագրող-պատճենահանող սարքավորումների վերանորոգման ծառայություններ/, այդ թվում՝**	
1.1	Գունավոր տպագրության Xerox DC 252 մեքենայի սպասարկում	Գունավոր տպագրության Xerox DC 252 մեքենայի ընթացիկ նորոգում և սպասարկում: Արտաքին զննում, տեխնիկական ու ծրագրային խափանումների ախտորոշում և վերացում, օպտիկական և լազերային համակարգի, թղթուղու մաքրում: Շահագործման ժամկետը լրացած հանգույցների փոխարինում նորով: Փոխարինվող պահեստամասերը տրամադրվում են ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից: Նորոգման և սպասարկման աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից տրված հայտերի, որոնք ուղարկվելու են ծառայություն մատուցող ընկերության տրամադրած էլեկտրոնային հասցեին: Ծառայություն մատուցող մասնագետը պետք է ունենա նշված գունավոր պատճենահանման և տպագրական մեքենաների սպասարկման համար անհրաժեշտ փորձ և մասնագիտական ունակություններ: Աշխատանքներն իրականացվելու են ՀՀ ՊՆ վարչական համալիրում, հայտերը էլեկտրոնային հասցեին ուղարկելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
1.2	Գունավոր տպագրության Xerox Versant 80 մեքենայի սպասարկում	Գունավոր տպագրության Xerox Versant 80 մեքենայի ընթացիկ նորոգում և սպասարկում: Արտաքին զննում, տեխնիկական ու ծրագրային խափանումների ախտորոշում և վերացում, օպտիկական և լազերային համակարգի, թղթուղու մաքրում: Շահագործման ժամկետը լրացած հանգույցների փոխարինում նորով: Փոխարինվող պահեստամասերը տրամադրվում են ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից: Նորոգման և սպասարկման աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից տրված հայտերի, որոնք ուղարկվելու են ծառայություն մատուցող ընկերության տրամադրած էլեկտրոնային հասցեին: Ծառայություն մատուցող մասնագետը պետք է ունենա նշված գունավոր պատճենահանման և տպագրական մեքենաների սպասարկման համար անհրաժեշտ փորձ և մասնագիտական ունակություններ: Աշխատանքներն իրականացվելու են ՀՀ ՊՆ վարչական համալիրում, հայտերը էլեկտրոնային հասցեին ուղարկելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
1.3	Գունավոր տպագրության Xerox WC 7228 մեքենայի սպասարկում	Գունավոր տպագրության Xerox WC 7228 մեքենայի ընթացիկ նորոգում և սպասարկում: Արտաքին զննում, տեխնիկական ու ծրագրային խափանումների ախտորոշում և վերացում, օպտիկական և լազերային համակարգի, թղթուղու մաքրում: Շահագործման ժամկետը լրացած հանգույցների փոխարինում նորով: Փոխարինվող պահեստամասերը տրամադրվում են ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից: Նորոգման և սպասարկման աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից տրված հայտերի, որոնք ուղարկվելու են ծառայություն մատուցող ընկերության տրամադրած էլեկտրոնային հասցեին: Ծառայություն մատուցող մասնագետը պետք է ունենա նշված գունավոր պատճենահանման և տպագրական մեքենաների սպասարկման անհրաժեշտ փորձ և մասնագիտական ունակություններ: Աշխատանքներն իրականացվելու են ՀՀ ՊՆ վարչական համալիրում, հայտերը էլեկտրոնային հասցեին ուղարկելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
1.4	Գունավոր տպագրության Xerox Altalink C8030 մեքենայի սպասարկում	Գունավոր տպագրության Xerox Altalink C8030 մեքենայի ընթացիկ նորոգում և սպասարկում: Արտաքին զննում, տեխնիկական ու ծրագրային խափանումների ախտորոշում և վերացում, օպտիկական և լազերային համակարգի, թղթուղու մաքրում: Շահագործման ժամկետը լրացած հանգույցների փոխարինում նորով: Փոխարինվող պահեստամասերը տրամադրվում են ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից: Նորոգման և սպասարկման աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից տրված հայտերի, որոնք ուղարկվելու են ծառայություն մատուցող ընկերության տրամադրած էլեկտրոնային հասցեին: Ծառայություն մատուցող մասնագետը պետք է ունենա նշված գունավոր պատճենահանման և տպագրական մեքենաների սպասարկման համար անհրաժեշտ փորձ և մասնագիտական ունակություններ: Աշխատանքներն իրականացվելու են ՀՀ ՊՆ վարչական համալիրում, հայտերը էլեկտրոնային հասցեին ուղարկելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
1.5	Միագույն պատճենման Canon2520, Canon2022, Canon 2422,Canon IR-5570, Xerox 5020, Xerox 5021, Xerox 5890, Kyocera TK L 800 մեքենաների սպասարկում	Միագույն պատճենման Canon2520, Canon2022, Canon 2422, Canon IR-5570, Xerox 5020, Xerox 5021, Xerox 5890, Kyocera TK L 800 մեքենաների ընթացիկ նորոգում և սպասարկում: Թմբուկի, մաքրող դանակի, ռետինե լիսեռի, ջերմաթաղանթի և այլ հանգույցների մաքրում և փոխարինում, տեխնիկական ու ծրագրային խափանումների ախտորոշում և վերացում: Փոխարինվող պահեստամասերը տրամադրվում են ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից: Նորոգման և սպասարկման աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից տրված հայտերի, որոնք ուղարկվելու են ծառայություն մատուցող ընկերության տրամադրած էլեկտրոնային հասցեին: Աշխատանքներն իրականացվելու են ՊՆ վարչական համալիրում և Երևան քաղաքի տարածքում տեղակայված զորամասերում, հայտերը էլեկտրոնային հասցեին ուղարկելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
1.6	Բազմացնող տպագրական Riso 570, Riso JR 1610, Riso SF 9350 մեքենաների սպասարկում	Բազմացնող տպագրական Riso 570, Riso JR 1610, Riso SF 9350 մեքենաների ընթացիկ նորոգում և սպասարկում: Թմբուկների, թղթուղու, քաշող գլանակների մաքրում, տեխնիկական ու ծրագրային խափանումների ախտորոշում և վերացում: Նորոգման և սպասարկման աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից տրված հայտերի, որոնք ուղարկվելու են ծառայություն մատուցող ընկերության տրամադրած էլեկտրոնային հասցեին: Աշխատանքներն իրականացվելու են ՊՆ վարչական համալիրում, Վ. Սարգսյանի անվան ռազմական համալասարանում և Ա. Խանփերյանցի անվան ավիացիոն ինստիտուտում, հայտերը էլեկտրոնային հասցեին ուղարկելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
1.7	Կտրող Ideal 6550-95 EP մեքենայի սպասարկում	Կտրող Ideal 6550-95 EP մեքենայի սայրի սրում, տեղադրում և կարգավորում: Աշխատանքներն իրականացվում են ըստ ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից տրված հայտերի, որոնք ուղարկվելու են ծառայություն մատուցող ընկերության տրամադրած էլեկտրոնային հասցեին: Ծառայություն մատուցող ընկերության մասնագետը պետք է ՊՆ վարչական համալիրում ապատեղադրի կտրող մասը, սրի սայրը (անհրաժեշտության դեպքում՝ ՊՆ վարչահամալիրից դուրս), այնուհետև տեղադրի և իրականացնի կարգավորում: Աշխատանքներն իրականացվելու են հայտերը էլեկտրոնային հասցեին ուղարկելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ծառայությունների անվանումը	Չ/մ	Քանակը	Առավելագույն գումարը (ՀՀ դրամ)	Մատուցումը 2020թ. ընթացքում, 2-րդ ից-4-րդ եռամսյակներ, բայց ոչ ուշ քան 05.12.2020թ.
1	**Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ /Տպագրող-պատճենահանող սարքավորումների վերանորոգման ծառայություններ/, որից՝**	դրամ	1	600000	Ըստ կատարված հայտերի
1.1	Գունավոր տպագրման պատճենահանման Xerox DC 252 մեքենայի սպասարկում	դրամ	1	110000	Ըստ կատարված հայտերի
1.2	Գունավոր տպագրման պատճենահանման Xerox VERSANT 80 մեքենայի սպասարկում	դրամ	1	105000	Ըստ կատարված հայտերի
1.3	Գունավոր պատճենահանման Xerox WC 7228 մեքենայի սպասարկում	դրամ	1	45000	Ըստ կատարված հայտերի
1.4	Գունավոր պատճենահանման Xerox Altalink C 8030 մեքենայի սպասարկում	դրամ	1	26000	Ըստ կատարված հայտերի
1.5	Միագույն պատճենման մեքենաներ Canon 2520, Canon 2022, Canon 2422, Canon IR-5570, Xerox 5020, Xerox 5021, Xerox 5890, Kyocera TK L 80	դրամ	1	206000	Ըստ կատարված հայտերի
1.6	Բազմացնող տպագրական Riso 570, Riso JR 1610, Riso SF 9350 մեքենաների սպասարկում	դրամ	1	64000	Ըստ կատարված հայտերի
1.7	Կտրող Ideal 6550-95 EP մեքենայի սպասարկում	դրամ	1	44000	Ըստ կատարված հայտերի

Վերանորոգման ծառայությունների տողերի միավորի գներ

Հ/Հ	Մատուցվող ծառայության անվանումը	Չ/մ	Միավորի գինը (ՀՀ դրամ)
1	**Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ /Տպագրող-պատճենահանող սարքավորումների վերանորոգման ծառայություններ/**	**դրամ**	
1.1	**Գունավոր տպագրման պատճենահանման Xerox DC 252 մեքենայի սպասարկում**		
	Դևելոպերի հանգույցի փոխարինում նորով	հատ	25 000
	Ֆյուզերի հանգույցի փոխարինում նորով կամ նորոգում	հատ	10 000
	Չնախատեսված անսարքությունների վերացում	հատ	10 000
	Ռետինե հոլովակների մաքրում	հատ	8 000
	Թղթուղու համակարգի մաքրում	հատ	7 000
	Լազերային համակարգի զննում, մաքրում	հատ	6 000
	Ծրագրային խափանումների վերացում	հատ	5 000
	Մեքենայի արտաքին և ներքին զննում, մանր խափանումների վերացում	հատ	3 000
1.2	**Գունավոր տպագրման պատճենահանման Xerox VERSANT 80 մեքենայի սպասարկում**		
	Ֆյուզերի հանգույցի փոխարինում նորով կամ նորոգում	հատ	10 000
	Չնախատեսված անսարքությունների վերացում	հատ	10 000
	Ռետինե հոլովակների մաքրում	հատ	8 000
	Ծրագրային խափանումների վերացում	հատ	5 000
	Օպտիկական համակարգի զննում, մաքրում	հատ	5 000
	Մեքենայի արտաքին և ներքին զննում, մանր խափանումների վերացում	հատ	3 500
1.3	**Գունավոր պատճենահանման Xerox WC 7228 մեքենայի սպասարկում**		
	Լազերային համակարգի զննում, մաքրում	հատ	7 500
	Թղթուղու համակարգի մաքրում	հատ	7 000
	Տեխնիկական և ծրագրային խափանումների վերացում	հատ	6 000
	Ռետինե լիսեռների մաքրում	հատ	5 500
1.4	**Գունավոր պատճենահանման Xerox Altalink C 8030 մեքենայի սպասարկում**		
	Լազերային համակարգի զննում, մաքրում	հատ	7 500
	Թղթուղու համակարգի մաքրում	հատ	7 000
	Տեխնիկական և ծրագրային խափանումների վերացում	հատ	6 000
	Ռետինե լիսեռների մաքրում	հատ	5 500
1.5	**Միագույն պատճենման մեքենաներ Canon 2520, Canon 2022, Canon 2422, Canon IR-5570, Xerox 5020, Xerox 5021, Xerox 5890, Kyocera TK L 80**		
	Թմբուկի, մաքրող դանակի մաքրում և փոխարինում	հատ	9 000
	Ռետինե լիսեռի, ջերմաթաղանթի փոխարինում	հատ	8 000
	Տեխնիկական և ծրագրային խափանումների վերացում	հատ	7 000

1.6	**Բազմացնող տպագրական Riso 570, Riso JR 1610, Riso SF 9350 մեքենաների սպասարկում**			
	Թմբուկների, թղթուղու, քաշող գլանակների մաքրում	հատ	6 000	
	Տեխնիկական և ծրագրային խափանումների վերացում	հատ	10 000	
1.7	**Կտրող Ideal 6550-95 EP մեքենայի սպասարկում**			
	Կտրող դանակի սայրի սրում, տեղադրում, կարգավորում	հատ	22 000	
ԸՆԴԱՄԵՆԸ			**229 500**	

Ծանոթություն՝ սպասարկումն իրականացվելու է Երևան քաղաքի տարածքում՝ համաձայն ՀՀ ՊՆ Ա ՎՏ վարչության կողմից տրված հայտերի:

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-20-8/6-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման ենթակա ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2020թ. պետական բյուջեից ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ. ընդ որում՝							
		մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Պատճենահանող սարքերի վերանորոգման ծառայություններ /Տպագրող-պատճենահանող սարքավորումների վերանորոգման ծառայություններ/	200000	200000	350000	350000	350000	600000	600000	600000

Ծանոթություն՝ CPV կոդը՝ 50311240/1:

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ս. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ տնօրեն

Ի. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Սա Ես. Մաթևոսյանի ստեղծ AR 02498848

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-20-8/6-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

	Մատուցված ծառայությունների							
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-20-8/6-1 պայմանագրի

ԱԿՏ N __
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անվանումը Կատարողի անվանումը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն